

## Դավիթ Լոքյանին ներկայացվել են Վայոց ձորի խոշորացված համայնքներում առկա հաջողությունները և ընթացիկ աշխատանքները

06.07.2017



ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը հուլիսի 4-ին աշխատանքային այցով եղել է Վայոց ձորի մարզում: Մարզպետ Հարություն Մարգարյանի ուղեկցությամբ նախարար Լոքյանը, ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական Գագիկ Մարտիրոսյանը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Աշոտ Կիրակոսյանը, նախարարության և մարզպետարանի ներկայացուցիչները այցելել են մարզի խոշորացված համայնքներ, ծանոթացել ընթացիկ իրավիճակին, անցկացրել խորհրդակցություններ:

Այցի առաջին կանգառը Չառիթափի համայնքում էր, որտեղ կառավարության ներկայացուցիչները ծանոթացել են համայնքապետարանում գործող քաղաքացիների սպասարկման կենտրոնի (ՔՍԳ) աշխատանքներին: Ներկաներին զեկուցվել է, որ համայնքի մեջ մտնող բնակավայրերի բնակիչներն այլևս կարիք չունեն ժամանակ վատնել որևէ տեղեկանքի համար: Խոշորացված բոլոր համայնքների այս կենտրոններում ցանկացած տեղեկանք ստանալը կամ վճարումներ անելը բոլորների հարց է: Բոլոր խոշորացված համայնքներում իրականացվում է ավագանու նիստերի առցանց հեռարձակում:

Համայնքային կենտրոնում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ Չառիթափի վարչական ներկայացուցիչները տեղեկացրել են խոշորացման արդյունքների մասին, խոսել նաև առկա խնդիրներից: Համայնքի ղեկավար Միմոն Բաբայանի խոսքով, հաստիքների վերաբաշխման արդյունքում անասնաբույժի 7 նոր հաստիք են ձևավորել: Չառիթափ, Մերս, Մարտիրոս և այլ բնակավայրերում իրականացվել է խմելու ջրի ցանցերի մասնակի վերանորոգում, Նոր Ազնաբերդում լուսավորություն է անցկացվել, իսկ Չառիթափում և Մարտիրոսում աշխատանքներն ընթացքի մեջ են:

Վարչական ներկայացուցիչները գոհունակություն են հայտնել նաև աղբահանության խնդրի կարգավորման հետ կապված, նշել, որ մինչ խոշորացումը աղբը կուտակվել է տեխնիկական միջոցներ չունենալու պատճառով: Դավիթ Լոքյանը տեղեկացրել է, որ կառավարության ղեկավարի հանձնարարությամբ առաջիկայում գումար կհատկացվի Չառիթափի համայնքին՝ առաջնային խնդիրները լուծելու համար: Այցի շրջանակներում նախարարը և կառավարության ներկայացուցիչները ծանոթացել են Մարտիրոս բնակավայրի սողանքից տուժած վթարային տների վիճակին: Նախարար Լոքյանը զրուցել է բնակիչների հետ, քննարկել ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքերը:

Ջերմուկի քաղաքապետարանում նախագծողների մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ էլ քննարկվել են Ջերմուկի զարգացման ծրագրի աշխատանքների ընթացքը, իսկ հաջորդիվ Ջերմուկի վարչական ներկայացուցիչները նախարարին զեկուցել են կատարված աշխատանքների մասին: Այցի վերջին կանգառը խոշորացվող Եղեգիսի Շատին կենտրոնում էր: 2017 թվականի նոյեմբերի 5-ին տեղի են ունենալու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, սակայն հրավիրած խորհրդակցության ժամանակ նախարար Լոքյանը հայտարարել է, որ արդեն ընթացիկ ամսում ՏԿԶ նախարարության, մարզպետարանների, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից ձևավորված հատուկ թիմերն այցելելու են համայնքներ և յուրաքանչյուրի հետ քննարկումներ են կազմակերպվելու:

Նախարարը տեղեկացրել է, որ կառավարությունը խոշորացված համայնքներին մեկ շնչի մասով միջին հաշվով հատկացրել է 65 դոլարի չափով գումար, որը հիմնականում հենց համայնքների առաջարկությամբ է ծախսվել այս կամ այն խնդիրը լուծելու համար: Նա ներկայացրել է իրականացված աշխատանքների մասով ամփոփ տեղեկություն, արձանագրել, որ խոշորացված համայնքներում արդյունքները տեսանելի են. տրամադրվել են տեխնիկական միջոցներ, ջրագծեր են կատուցվել, համայնքային ճանապարհներ են վերանորոգվել, զարգացման ծրագրեր իրականացվել և այլն: <<Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանն արդեն ստորագրել է վարչատարածքային բարեփոխումների մասին օրենքի վերջին փոփոխությունների նախագիծը և մենք նոյեմբերի 5-ին պետք է գնանք ընտրությունների: Համայնքներում տնտեսական ծրագրեր բերելու ժամանակն է: Մինչև նոյեմբերի 5-ի ՏԻՄ ընտրությունները յուրաքանչյուր համայնքի համար պետք է նախապատրաստենք ծրագիր և հետո շատ արագ դնենք գործածության մեջ: Կարծում եմ, միասին մենք կարողանալու ենք մեկ թիմ դառնալ, ներդրումային ծրագրեր բերել, իսկ պետությունն էլ կանգնելու է խոշորացված համայնքների կողքին>>,-ասել է Դ. Լոքյանը: Նա կարևորել է համայնքների սեփական եկամուտների հավաքագրման հարցը և հանձնարարել համայնքապետերին ուշադրության տակ պահել հարցը, հավելել, որ կառավարության կողմից առավել օժանդակության կարժանան այն համայնքները, որոնք լավագույն ցուցանիշները կունենան:

ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական Գագիկ Մարտիրոսյանը համայնքապետերին ուղղված իր խոսքում համայնքի զարգացման հարցում կարևորել է նրանց նախաձեռնողականությունը և դրա համար անհրաժեշտ հմտությունները: Գ. Մարտիրոսյանը հաջողություն է մտադրել համայնքապետերին, նույնպես վստահեցրել, որ եթե համայնքները միավորեն իրենց ուժերը, հաջողություններն ակնհայտ են լինելու: Վայոց ձորի մարզ աշխատանքային այցելության բոլոր հանդիպումների ավարտին համայնքապետերին և բնակավայրերի վարչական ներկայացուցիչներին հետաքրքրող հարցերին տրվել են հստակ պարզաբանումներ:

Աղբյուրը՝ <http://mtad.am>, 05.07.2017